ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ՍՏԱՄՈՔՍԱՂԻՔԱՅԻՆ ՏՐԱԿՏԻ ՕՏԱՐ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՄԵԿԵԼՅԱՆ ԴԻՎԵՐՏԻԿՈՒԼԻ ՀԱՄԱԿՑՄԱՆ ՀԱԶՎԱԴԵՊ ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Ասլանյան Ա.Ա., Մանուկյան Մ.Ա., Հարությունյան Ա.Ս*.

Երևանի Մխիթար Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի մանկական վիրաբուժության կլինիկա, Երևան, Հայաստան
«Մուրացան» հիվանդանոցային համալիր, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 10/21/2014թ., ընդունված է՝ 01/25/2014թ.

«Մուրացան» հիվանդանոցային համալիրի մանկական վիրաբուժության կլինիկայում երեք տարվա գործունեության ընթացքում կլինիկա են դիմել ստամոքսաղիքային տրակտի օտար մարմին ախտորոշումով 1.5 տարեկանից մինչև 9 տարեկան 53 երեխա: 51 երեխայի մոտ դինամիկական հսկողության արդյունքում, դիետայի հատուկ նշանակումներով, նկատվեց օտար մարմնի բնական ճանապարհով ինքնուրույն դուրս բերում, տարբեր ժամկետներում, առանց որևէ բարդությունների:

2014 թվականին մանկական վիրաբուժության կլինիկա էր դիմել 2 տարեկան 2 ամսեկան երեխա, որը, ըստ ծնողների, կուլ է տվել մետաղական բանալի:

Կատարված ռենտգեն հետազոտության արդյունքում ախտորոշվել էր ստամոքսաղիքային տրակտի օտար մարմին՝ մետաղական օղակով մետաղական բանալի: Երեխայի մոտ վերջին օրերի նկատվել էր կղարտադրություն (առանց տեսանելի ախտաբանական միացումների), բայց օտար մարմինը չէր հայտնաբերվել: Կատարված ռենտգենաբանական հետազոտության արդյունքում օտար մարմինը հայտնաբերվեց ստամոքսաղիքային տրակտում, ենթադրաբար՝ բարակ աղիներում: Երեխան ընդունվեց ստացիոնար հետազոտման և բուժման, քանի որ առկա կղարտադրության արդյունքում օտար մարմնի դուրս բերումը չէր նկատվել:

Որովայնի խոռոչի ռևիզիայի արդյունքում բարակ աղու վրա հայտնաբերվեց Մեկելյան դիվերտիկուլ: Արտաքին զննման ժամանակ, դիվերտիկուլի լուսանցքում շոշափվեց մետաղական բանալին իր օղակով: Կատարվեց Մեկելյան դիվերտիկուլի հեռացում:

2012 թվականին նկարագրվել է ստամոքսաղիքային տրակտի օտար մարմին՝ ժամացույցի տափակ մարտկոց, որը նույնպես վիրահատության ժամանակ հայտնաբերվել էր Մեկելյան դիվերտիկուլում:

Ռենտգենաբանական հետազոտման ժամանակ ստամոքսաղիքային տրակտի օտար մարմնի տեղաշարժի բացակայությունն անուղղակի վկայում է Մեկելյան դիվերտիկուլի առկայության մասին:

Ստամոքսաղիքային տրակտի օտար մարմնի դեպքում կղանքի անփոփոխ բնույթը նույնպես անուղղակի կարող է վկայել բարակ աղիների դիվերտիկուլի մասին:

Ստամոքսաղիքային տրակտի օտար մարմնի (կլինիկական և ռենտգենաբանական) տեղաշարժի բացակայությունն անուղղակի վկայելով Մեկելյան դիվերտիկուլի մասին, ստիպում է վիրաբույժին տակտիկապես պատրաստ լինել դիվերտիկուլի հեռացման՝ օտար մարմնի վիրաբուժական միջամտության ժամանակ: